

մոլլան, երբ այդ արպանցիները նամագի ու լուացման կը հրաւիրէր, իրենց կուշտ փորէն վերջ, քարոզելով անոնց պարտք ու պատուհաս, իսլամին փառքն ու անհաւատին կորանքը, հասցնելով սա մուժ, բուժ խղճմտանքներուն դժուարընկալ արբերուն...: Ու այցորդ պաշտօնակալներ, ոսկեզօծ թումբերով ձիերու քամակին, ով գիտէ ո՛ր գեղին մէջ իրենց սիրուհիները գտնելու...: Ու կու գային տակաւին շարժուն զօրաթեւերը, կասկածելի, մուգիր օտարականներ որսալու սահմանուած, պաշտօնապէս հռչակի ելած աւագակախումբերը հետապնդող, գեղէ գեղ հաղորդակցութիւնը ապահովող, որոնց սպաները կ'արժէր տեսնել, դեռ ձիէն չիջած, փոխյիսնապետներ, շողշողուն կալոններով, գեղջուկ՝ ինչպէս յոխորտ, խորապէս թուրք սակայն, մտովի լզելով համբաւը գիւղապետին աղջիկներուն, որոնք անհասկնալի օրէնքով մը շքեղ բացառութիւններ էին, չոր, ճահճոտ, այրեցաւեր այդ մարդերուն համար անկարելի գեղեցկութիւններ, անուշ, զգլխիչ ու պուպրիկ, դեղին, դեղնախտաւոր, անկիւնոտ միսերով, խարզած մորթով, մեծ-փոր գրեթէ, յդի աղջիկներուն պարզած զգուագին պատկերը հիմնովին հերքող, եւ որոնք իրենց այդ բարիքն ու շնորհը կը քաւէին տունէն գրեթէ դուրս ելլել չկրնալով, իրենց նշանածութեան շրջանին՝ ինչպէս ամուսնութենէն վերջն ալ, չորս-հինգ զաւկի մայր, բայց պահող անաղարտ շէնքը, կանոնաւոր կառոյցը իրենց գիծերուն, թարմութիւնը իրենց մոյսքին, զգլխանքը իրենց միսերուն, որոնցմով հովանաւոր էր եղեր պարմանութիւնը իրենց: Գիւղապետին աղջիկներուն հեքիաթը այդ գիւղին համար բարիք էր՝ որքան չարիք: Թերուս եւ կէս յիմար այդ յիսնապետները կը փնտռէին տակաւին բարեկամութիւնը գիւղապետին մէկ հատիկ մանչուն.- սա աւելի անբացատրելի հմայք մը, հրաշք մը գրեթէ, այդ վայրերուն համար այնքան տարօրինակ, քսանին մէջ իսկ հսկայ իբր մարմին, գիրքերուն բառով գեղանձն, փարթամ, հրապուրիչ ու այլապէս ազդեցիկ, իր հայութիւնը ընելու աստիճան սխալ